Համայնքի տարածքում արտադրական, առևտրային և այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալները ներկայացված են **աղյուսակ 2**-ում:

ԱղՅՈՒՍԱԿ 2.

**ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՌ 01.01.2019Թ ԴՐՈՒԹՅԱՄԲ**

Արտադրական կազմակերպություններ	Առևտրային կազմակերպություններ	Ծառայություններ մատուցող կազմակերպություններ
<ul style="list-style-type: none"> ✓ «Տիգրան Մարկոսյան» Ա/Ձ դարբնոց ✓ «Արթուր Բագրատյան» Ա/Ձ, դարբնոց ✓ «Գրիշա Հարությունյան» Ա/Ձ հացի և լավաշի թխման արտադրամաս ✓ «Աստղաբույլ» ՍՊԸ, խմորեղենի արտադրամաս ✓ «Կառուցող» ՍՊԸ քարի արտադրամաս ✓ «Փրկարար» ՍՊԸ 	<ul style="list-style-type: none"> ✓ 16 (տասնվեց) սննդի և տնտեսական ապրանքների խանութներ ✓ 1 (մեկ) մասնաբերքի վաճառակետ ✓ 2 (երկու) տեխնիկական հեղուկների, քսայուղերի վաճառակետ ✓ 1 (մեկ) դեղատուն ✓ 2 հեղուկ վառելիքի վաճառքի բենզալցակայան ✓ 1(մեկ) գյուղատնտեսական դեղորայքի (թունաքիմիկատներ, բուժանյութեր, անասանունի բուժման համար նախատեսված դեղեր, պարարտանյութեր) վաճառքի խանութ ✓ 2 (երկու) շինարարական ապրանքների վաճառքի խանութներ ✓ 2 (երկու) հագուստի վաճառքի խանութներ ✓ 1 (մեկ) մսի վաճառքի խանութ 	<ul style="list-style-type: none"> ✓ 2 (երկու) հյուրանոց ✓ 2 (երեք) հանրային սնունդ սպասարկող օբյեկտներ ✓ 2 (երկու) վարսավիրանոց ✓ 1 (մեկ) սրճարան ✓ 1 (մեկ) կարի արհեստանոց ✓ 2 (երկու) ատամնաբուժարան

Առևտրի և սպասարկման ոլորտներում զբաղվածների թիվը կազմում է շուրջ 120 մարդ:

3.8 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի մեկ նախադպրոցական հաստատություն, որի հզորությունը նախատեսված է 300 երեխաների համար, սակայն 2018թվականին մտուր մանկապարտեզ են հաճախել շուրջ 157 երեխա՝ 5 խումբ, որոնց սպասարկում են 21-աշխատողներ՝ 10 մանկավարժ և 11 սպասարկող անձնակազմ: 2016թվականից շարունակվում է "Կրթական" ծրագրերի իրականացման գրասենյակի միջոցներով վերանորոգված մանկապարտեզի մեկ սենյակում նախակրթարանի գործունեությունը և 2018թվականին այդ ծրագրի գործունեության համար համայնքի բյուջեից ծախսվել է շուրջ 2.061,5 հազար դրամ: 2016թվականին համայնքը նախադպրոցական հաստա-

տությանը սուբսիդավորել է 40500,0 մլն դրամ: 2018թվականի համայնքի կողմից 1-ին դասարան հաճախող 132 երեխաներին նվիրել է պայուսակներ, իրենց գրենական պիտույքներով, իսկ ամանորին արդեն իսկ ավանդույթ դարձած շուրջ 650 նվերներ "Մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառման ժամանակ բաժանվել է 1-3 դասարանի և մանկապարտեզի երեխաներին:

Համայնքն ունի երկու միջնակարգ դպրոց, որտեղ 2018թվականին սովորել են 833 երեխա, որը 2017թվականի դրությամբ աճել է 6,2%-ով, աշխատում են 63 ուսուցիչներ և 23 սպասարկող անձնակազմ: Համայնքի 2 դպրոցներն էլ գտնվում են վերանորոգված վիճակում:

3.9 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քասախ համայնքում հիմնովին վերանորոգված շենքում գործում է «Արվեստա-մշակութային դպրոց-ստուդիա» ՀՈԱԿ-ը, որը կազմավերվել է «Մշակույթի կենտրոնի» ՀՈԱԿ-ի և «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի միավորումից, որտեղ կենտրոնացված են մշակույթի և արվեստի բոլոր բնագավառները: Դպրոցում գործում են ձեռարվեստի, կարատեի, ժողովրդական պարի և երգի, մարմնամարզության, օտար լեզուների, ասմունքի, դերասանական և այլ խմբակներ, դաշնամուրի, ժողովրդական գործքիների բնագավառում: Այստեղ սովորում են շուրջ 320 երեխա, որոնց սպասարկում են 33 աշխատակիցներ: Այստեղ տարվա ընթացքում կազմակերպվում է շուրջ 12 միջոցառումներ նվիրված միջազգային, հանրապետական և համայնքային բոլոր տոներին: Դպրոցի սաները 2017թվականին մասնակցել են բազմաթիվ մարզային, հանրապետական մրցույթ փառատոններին՝ զբաղեցնելով 1-2 տեղը: Մշակույթի կենտրոնում է գտնվում նաև համայնքի գրադարանը, որտեղ կա շուրջ 7471 կտոր գրականություն, 2018թվականին ձեռք է բերվել 68 կտոր գիրք, որից 9-ը պատմական և 59 գեղարվեստական գրքեր և 2017թվականին ունեցել է 324 ընթերցող: Համայնքն ունի www.kasakh.am ինտերնետային վեբ կայքը, որտեղ տեղ է գտնում համայնքային նորությունները, համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները, համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները, կարգադրությունները, համայնքի բյուջեի ծախսային և եկամտային մասերը և դրանց տնօրինումն ըստ կատարման ժամկետների, ինչպես նաև հայտարարություններ: Քասախ համայնքում է գործում երկրապահ կամավորական միության (ԵԿՄ) տարածքային բաժանմունքը, որտեղ ընդգրկված են 200 կամավորականներ:

3.10 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա, որտեղ 2019թվականի հունվարի 1-ի դրությամբ աշխատում են 3 բժիշկ և 4 բուժքույր, սպասարկող անձնակազմ 4, իսկ այցելուների թիվը 2018թվականի ընթացքում կազմում է 9852 մարդ, որը 2017թվականի դրությամբ կրճատվել են 9.2%-ով, 2018թվականի ընթացքում համայնքում ծնվել է 65 երեխա՝ 2017թվականի համեմատ 3 երեխայով պակաս ծնունդ է գրանցվել, շենքը ամբողջովին վերանորոգված է: Համայնքում

գործում է նաև ՀՀ ԱՆ «Ներդրումների Կլիմայի» ՓԲԸ-ն, 2016-2017թվականի ընթացքում շենքը մասնակի վերանորոգվել է բարերարների ներդրումների շնորհիվ, իսկ բակը ասֆալտապատվել է Քասախ համայնքի միջոցներով: Համայնքում գործում է նաև 2 ատամնաբուժարաններ և դեղատուն: Համայնքի սպորտային ոլորտը զարգացած է հատկապես «Կիոկուշինկա» կառատեի և ծանրամարտի սպորտաձևով: Համայնքում գործում է ծանրամարտի սպորտ դպրոց, որի շենքային պայմանները նույնպես գտնվում են գերազանց վիճակում: Համայնքի կենտրոնում է գտնվում մոտ 13210 քմ ընդհանուր մակերեսով ֆուտբոլի դաշտը, որի 7500 քմ կազմում է խաղահրապարակը և իր չափերով հանրապետությունում զբաղեցնում է 3 տեղը և հիմնովին վերանորոգման կարիք ունի: Քասախ համայնքի զարգացման ծրագրով նախատեսվում է գալիք 5 տարիների ընթացքում պետական և մասնավոր ներդրումների միջոցներով համայնքում ստեղծել մարզահամալիր և Քասախի մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիա:

3.11 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶՐՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱԿՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքն ունի 5 հա տարածքով զբոսայգի, որտեղ կառուցված է Հայրենական մեծ պատերազմի զոհվածների հուշարձան-կոթողը և հանդիսությունների սրահ: Վերջինս միջև 2022 թվականի ավարտը նախատեսվում է վերակառուցել հայ առաքելական եկեղեցու: Տարածքը ամբողջովին ծառապատված է և 2015թվականի ապրիլի 20-ին զբոսայգում տեղադրվեցին Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված 2 խաչքարեր:

3.12 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Բնակիչները հիմնականում աշխատանք են փնտրում Երևան քաղաքում, իսկ սոցիալական ծառայությունը գտնվում է Եղվարդ քաղաքում, որը համայնքից հեռու է 22կմ, որը բնակիչների համար դժվարություններ է ստեղծվում այնտեղ հասնելու համար: Համայնքում նպաստ ստացող ընտանիքների թիվը 2018թվականին կազմել է 240 ընտանիք, որոնց թիվը 2017թվականի համեմատ ավելացել է 25 ընտանիքով: 2018թվականին համայնքի սոցիալապես անապահով շուրջ 100-ից ավել ընտանիքների տրամադրվել է 2000.0 մլն դրամի դրամական օգնություն:

3.13 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Քասախ համայնքի բնակչությունը մասնակցում է տեղական ինքնակառավարման աշխատանքներին: Համայնքում կատարվող յուրաքանչյուր խոշոր ներդրում, ինչպես նաև համայնքի զարգացման ծրագրերը, համայնքի բյուջեի կատարողականը, քաղաքաշինական ծրագրերը կյանքի կոչելուց առաջ համայնքում կատարվել է հանրային բաց լսումներ և հաշվի են առնվել համայնքի բնակչության կարծիքը,

2018թվականին կատարվել են 2 հանրային քննարկումներ: Բացի դրանից համայնքի www.kasakh.am վեբ կայքի, Քասախի համայնքապետարանի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջում, ինչպես նաև համայնքում տեղադրված հայտարարությունների ցուցատախտակների և sms-ների միջոցով բնակչությանն իրազեկվում է համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կայացրած որոշումները: Համայնքի բնակչությանը բջջային sms-ի միջոցով ծանուցվում է նաև նրանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: 2018թվականին համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 469 որոշում, 41 կարգադրություն, համայնքի ավագանու կողմից գումարվել է 9 նիստ, որոնց ընթացքում կայացվել է 40 որոշում: Քասախ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 21-ի N 12-Ն և 2015թվականի հոկտեմբերի 5-ի 44-Ն, 45-Ն որոշումներով հաստատվել է համապատասխանաբար «Քասախ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը», «Քասախ համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը», «Քասախ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության» կարգը, որով համայնքի բնակչությունը մասնակցում է համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման), համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների կատարման գործընթացներին: 2017 թվականին գումարվել է Քասախ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի 2 նիստ, որի ընթացքում կայացվել է 5 որոշում:

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում 2015թվականի օգոստոսի 12-ին իրականացվել է շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության կազմակերպումը ուժեղ երկրշարժի դեպքում» թեմայով: Աղետների ռիսկերի կառավարման համար, Քասախ համայնքի ղեկավարի 2015 թվականի փետրվարի 24-ի N 28-ի որոշմամբ ստեղծվել է ՀՀ Կոտայքի մարզի Քասախ համայնքի բնակչության տարահանման պլան, որը երկողմանի հաստատվել է նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության կողմից:

Քասախ համայնքի ղեկավարի 2017թվականի փետրվարի 13-ի N33 որոշումով փոփոխվել և թարմացվել է Քասախ համայնքի «Քաղպաշտպանության պլանը»: 2017թվականին հաստատվել է նաև համայնքի դպրոցների և նախադպրոցական հաստատության քաղպաշտպանության պլան ժամանակացույցը: Քասախ համայնքի

ղեկավարի 2018թվականի հոկտեմբերի 23-ի N 386 որոշմամբ ստեղծվել են քաղաքացիական պաշտպանության չորս ծառայություններ՝

- 1) Ինժեներական ծառայություն
- 2) Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն
- 3) Կոմունալ-տեխնիկական ծառայություն
- 4) Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն

3.15 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Քասախ համայնքը մինչ օրս համագործակցում է ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի, «Փրկենք երեխաներին» կազմակերպության Հայաստանյան գրասենյակի, իսկ 2015թվականից նաև «Կրթական» ծրագրերի իրականացման գրասենյակի և մի շարք այլ համայնքային ներդրումներ իրականացնող ընկերությունների և կազմակերպությունների հետ, որոնք նպաստել են համայնքի զարգացմանը: 2017թվականին համայնքը սկսեց համագործակցել նաև «Ակբա կրեդիտ ագրիկոլ» բանկ ՓԲԸ-ի հետ համայնքում իրականացնելով էներգիախնայողական ծրագիր: Այդ համագործակցությունը շարունակվել է նաև 2018թվականին՝ կատարելով շուրջ 24117.0 մլն. դրամի աշխատանքներ: 2017 թվականին համայնքը համագործակցել է նաև «Վերջին օրերի սրբերի բարեգործություններ կորպորացիայի Հայաստանյան ներկայացուցչության» հետ, համայնքում կառուցելով շուրջ 3900 մետր խմելու ջրագիծ և տեղադրվել է 3 ցայտաղբյուրներ: Համայնքում 2012թվականից սկսել է աստիճանաբար զարգանալ փոքր և միջին ձեռնարկությունները, որին շատ է օգնում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի Կոտայքի մարզային մասնաճյուղի կողմից իրականացվող տարաբնույթ դասընթացները, խոհրդատվությունները: 2018 թվականին համայնքում կատարվել են հետևյալ ներդրումային ծրագրերը՝ Համայնքապետարանի շենքում վերանորոգվել է խորհրդակցական դահլիճ անհարժեշտ սարքավարումներով և գույքով, որի արժեքը կազմել է 8.700.000 դրամ, որի 30%-ը հատկացրել է պետությունը:

1. Համայնքապետարանում «Մեկ պատուհան» սկզբունքով սպասարկման գրասենյակի ներդրում՝ 3.500.000 դրամ արժողությամբ:
2. Էներգիախնայողական ծրագիր շարունակություն -համաձայն որի համայնքի փողոցների լուսավորության ընդլայնում 20 սյունով և 31 կետով և որ ամենակարևորն է համայնքի բոլոր փողոցների 300 հատ 250 ՎՏ-ոց լուսատուները փոխարինվել են 80 ՎՏ էներգիախնայողական լուսադիոդային լուսատուներով, որի օգտագործման արդյունքում համայնքի գիշերային լուսավորության ժամանակահատվածը երկարացվել է 4 ժամի փոխարեն 6 ժամով, և մթնոլորտ է արտանետվում շուրջ 8.9% պակաս CO2 գազ: Էներգիախնայողական ծրագրի վերջնական արժեքը կազմել է 17.859.021 դրամ: Արդյունքում ներկայումս Քասախ համայնքը լուսավորվում է 438 հատ 80 ՎՏ-ոց լուսատուներով:
3. Ն. Ավետիսյան փողոցի շուրջ 800 մետր ճանապարհի և մայթի կապիտալ վերանորոգում, որի համար ծախսվել է շուրջ 45.000.000 դրամ, որի 40%-ը կամ 18.000.000 դրամը հատկացրել է պետությունը:
4. Զ. Անդրանիկի փողոցի շուրջ 1.06 կմ ճանապարհի կապիտալ վերանորոգում, որի համար ծախսվել է շուրջ 23.000.000 դրամ, որի 40%-ը կամ 9.200.000 դրամը հատկացրել է պետությունը:


5. Քասախի «Արուսյակ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տարածքում խաղահրապարակի կառուցում 2.000.000 դրամ արժողությամբ:

3 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՈՐՏԵՂԻՑ Է ԳՈՅԱՑԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Համայնքի 2018թ. բյուջեի փաստացի մուտքերը,


251666.6 հազար դրամ

հազար դրամ




ԻՆՉՊԻՍԻՆ Է ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ

հազար դրամ



ԻՆՉՊԵՍ ԵՆ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ



հազար դրամ



ՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՆ ԾԱԽՍԿԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՅՆԵՐԸ

Հ/հ	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (ՀԱՋԱՐ ԴՐԱՄ)	ՏԵՍԱԿԱՐԱ Ր ԿՇԻՈՒՐ (%)
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	210634,3	100,0 %
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	53811.2	25,5 %
2.	Պաշտպանություն	0,0	0.0 %
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0,0	0.0 %
4.	Տնտեսական հարաբերություններ	-33750.7	-16,0%
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	3215.1	1,5 %
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	39136.9	18,6 %
7.	Առողջապահություն	0.0	0.0 %
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	2453,9	1,2 %
9.	Կրթություն	76266,5	36.2 %
10.	Սոցիալական պաշտպանություն	2000,0	1,0 %
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	16740,0	0.0 %

ԻՆՉ ՏԵՍԱԿԻ ԾԱԽՍԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ 2018թ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՆ



Ա. ՄԿՐՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆԻՄԻ 2019թվականի N 27

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Քասախ համայնքի 2019 թվականի կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման կարգը և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԵՐԵՍ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՍԻԿՈՆ

Դեմ -6

ԱԲԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ԹՈՎՍԱՄՅԱՆ ԱՐՏԱԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԵ

ՄԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝

ԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿԱՐԳԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնքի ղեկավարին (այսուհետ՝ համայնքի ղեկավար) վերապահված կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը:
2. Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից օրենքով պատվիրակված՝ պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով:
3. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով սահմանված համայնքի սեփական լիազորություններն ուղղված են բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը՝ համաձայն համայնքի 2019 թվականի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և համայնքի ավագանու սահմանած սույն կարգով:
4. Սույն կարգում թվարկված սեփական լիազորություններն սպառիչ չեն: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բացի, այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքը կարող է իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ: Համայնքի ղեկավարը կարող է իրականացնել համայնքի շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործունեություն:

5. Համայնքի ղեկավարը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, համայնքի տարածքում սեփական լիազորություններն իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

- 1) Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների
- 2) Բնակիչների մասնակցության
- 3) Ֆինանսների
- 4) Պաշտպանության կազմակերպման բնագավառում
- 5) Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման
- 6) Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության
- 7) Հողօգտագործման բնագավառում
- 8) Տրանսպորտի
- 9) Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների
- 10) Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
- 11) Սոցիալական պաշտպանության
- 12) Գյուղատնտեսության և անասնաբուժության և բուսասանիտարիայի
- 13) Շրջակա միջավայրի պահպանության
- 14) Զբոսաշրջության

II. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

6. Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) կատարում է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է համապատասխան միջոցներ,
- 2) իր լիազորությունների շրջանակում կայացնում է որոշումներ, որոնցով խթանում է համայնքում տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի և նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացումը,
- 3) կազմակերպում է համայնքի արխիվային գործի վարումը, լիազորագիրը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար:

7. Բնակիչների մասնակցության բնագավառում համայնքի ղեկավարը՝

- 1) ստեղծում է բավարար պայմաններ համայնքի բնակիչների համար՝ իրագեկ լիներու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագոր-

ծելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության)։

2) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում,

3) կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին։

8. Ֆինանսների բնագավառում համայնքի ղեկավարը

1) կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն։

2) ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը

3) կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը։

4) տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները։

5) ապահովում է համայնքի բյուջետային գործընթացի կառավարումը։

9. Պաշտպանության կազմակերպման բնագավառում համայնքի ղեկավարը՝

1) վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ։

2) մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը, ինչպես նաև տարածքային պաշտպանության և ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովման միջոցառումներին։

3) իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկատվություն է տրամադրում տարածքային զինվորական կոմիսարիատին։

10. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարը

1) իրականացնում է միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով.

2) իրականացնում է համայնքի բնակչության ազդարարումը:

11. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի ղեկավարը՝

1) կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը կամ դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները:

2) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն),

3) օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.

4) համաձայնեցնում է ճարտարապետաշինարարական նախագծերը, տալիս է շինարարության (քանդման) թույլտվություն, միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.

5) ձևակերպում է շինարարության ավարտական ակտ, ինչպես նաև տրամադրում է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվություն.

6) վերահսկողություն է իրականացնում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

7) իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը.

8) համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան՝ տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն.

9) կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը.

10) կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը.

11) կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

12) կազմակերպում է համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները, իրականացնում է «Հուղարկավորությունների

կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

13) կազմակերպում է հանգստի հանրային վայրերի խնամքը և պահպանությունը:

12. Հողօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարը՝

1) կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը և ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.

2) մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, 3) օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը.

3) վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.

4) կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները.

6) իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքներ:

13. Տրանսպորտի բնագավառում համայնքի ղեկավարը՝

1) կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը.

2) կազմակերպում է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա.

3) կազմակերպում և կառավարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեությունը.

4) տալիս է համայնքի տարածքում մարդատար տաքսիների (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվություն:

14. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարը՝

1) կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.

2) կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, երիտասարդական կենտրոնների, գրադարանների, կրթական, մշակութային և երիտասարդական այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները.

3) իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն.

4) ստեղծում է պայմաններ երիտասարդական ծրագրերի և միջոցառումների կազմակերպման, անցկացման համար.

5) աջակցում է համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, միջոցառումների իրականացմանը:

15. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

1) կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների գործունեությունը.

2) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է մարզական հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, վերանորոգում, ստեղծում է հանգստի գոտիներ:

16. Սոցիալական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարը

1) միջոցներ է ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին.

2) միջոցներ է ձեռնարկում սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին՝ օգնելու հայտնաբերել և օգտագործել դժվարություններ հաղթահարելու իրենց կարողությունները.

3) նպաստում է համայնքում բնակվող սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը՝ կազմակերպելով տնային այցելություններ և հնարավորության դեպքում մատուցելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ կամ ուղղորդելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ կամ մասնագիտացված այլ կազմակերպություններ.

5) ապահովում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղական սոցիալական ծրագրերի կազմումը և իրականացումը՝ որպես առանձին ծրագիր կամ որպես համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մաս:

17. Գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառում համայնքի ղեկավարի

1) կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.

2) տալիս է համայնքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում.

3) իրականացնում է համայնքի գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառում

4) աջակցում է գյուղատնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը,

5) աջակցում է գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլ միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը,

6) տրամադրում է լիազոր մարմնին տեղեկատվություն կատարված անասնահա-
կահամաճարակային միջոցառումների, հայտնաբերված վարակիչ և ոչ վարակիչ հի-
վանդությունների վերաբերյալ:

18. Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համայնքի ղեկավարը

- 1) կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց
վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող
տարածքների և համայնքային անտառների պահպանությունը:

19. Ջրոսաշրջության բնագավառում համայնքի ղեկավարը

- 1) գույքագրում և վարում է համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պա-
տմամշակութային, մարդկային) գրանցամատյանը.
- 2) սահմանում և տրամադրում է համայնքում հատուկ կայանման և կանգառի
վայրեր՝ զբոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների համար.
- 3) զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման
և զբոսաշրջության կայուն զարգացման նպատակով համագործակցում է պետական
կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության հետ.
- 4) խթանում է զբոսաշրջային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծմանը,
ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը միտված միջոցառումների կազմակեր-
պմանը և անցկացմանը:

III. ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

20. Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեից ֆինանսավորում պահանջվող
սեփական լիազորությունների իրականացման նպատակով, մինչև համայնքի տվյալ
տարվա բյուջեի հաստատումը, համայնքի ավագանու հաստատմանն է
ներկայացնում իրականացվելիք սեփական լիազորությունների ցանկը և դրանց
կատարման համար անհրաժեշտ ծախսերը:

21. Համայնքի ավագանին, ելնելով համայնքի բյուջեի հնարավորություններից,
որոշում է բոլոր սեփական լիազորությունների համար հատկացվող ընդհանուր
գումարի և յուրաքանչյուր սեփական լիազորության իրականացման համար
անհրաժեշտ հատկացման չափը:

22. Հաշվետու տարվա ընթացքում կամավոր լիազորությունների ընդհանուր
գումարի սահմաններում մի կամավոր լիազորության իրականացման նպատակով
հատկացված գումարը կարող է համայնքի ավագանու որոշմամբ ուղղվել մեկ կամ մի
քանի այլ կամավոր լիազորությունների իրականացման համար՝ ելնելով տարվա
ընթացքում իրադրության փոփոխություններից:

23. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համայնքի ղեկավարին վե-
րապահված այլ սեփական լիազորությունների իրականացման համար համայնքի
ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

24. Զինձառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարե-
լավման, զինձառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիա-

լական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները համայնքի ղեկավարի կողմից քննարկվում են միայն մշտական գործող հանձնաժողովի կողմից սեփական լիազորության իրականացման եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

25. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է ութսուն հազար դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնություն կարող է հատկացվել առավելագույնը 3 անգամ, որի չափը չի կարող գերազանցել մեկ հարյուր հիսուն հազար ՀՀ դրամը: Չի արգելվում սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, սական համայնքում փաստացի բնակվող բնակչին: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին (ծնող, քույր, եղբայր, կին, ամուսին), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

26. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան 1 անգամ՝ տարեկան ուսման վարձի 30%-ի չափով:

27. Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, կին, ամուսին), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

28. Համայնքում պաշտպանության կազմակերպման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հողօգտագործման, տրանսպորտի, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, աշխատանքի և սոցիալական ծառայության, գյուղատնտեսության բնագավառներում սեփական լիազորություններով իրականացնել 2019 թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվի

Քասախ համայնքի ղեկավար՝





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kaskakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2019 թվականի N 28

2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՈՒՄ ՍՈՒՏՔԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Քասախ համայնքի ղեկավարի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N 36 կարգադրությամբ ստեղծված գույքագրման հանձնաժողովի կողմից կազմված ակտերն ընդունել հիմք համաձայն N 1-3 հավելվածների, օգտագործման ոչ պիտանի շրջանառու, հիմնական միջոցները, համաձայն կազմված ակտերի, դուրս գրել համայնքապետարանի հաշվեկշռից, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցները մուտքագրել համայնքի հաշվեկշիռ:

Կողմ -4

Դեմ -6

Չեղնակալի -0

ԱՐԴԱՀԱՄՅԱՆ ԵՐԵՍ

ԱՐԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ

ԱՐԴԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՍԻԿՈՆ

ԹՈՎՍԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԵ

ՄԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝



ՂԱՐԵԿ ՄԿՐՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2019 թվականի N 29

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական օրենսգրքով», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N 76 -Ա որոշմամբ, համայնքի ավագանին որոշում է

1. Որպես նվիրաբերություն ընդունել՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներով ստեղծված գույքը՝ Կոտայքի մարզի Քասախ համայնքի նոր թաղամասի զագաֆիկացումը՝ 11,310,0 հազար դրամ հաշվեկշռային արժեքով:
2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերությունն ընդունած գույքը անհատույց անժամկետ տրամադրել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին բնակչության զագամատակարարման նպատակով օգտագործելու համար:
3. Սույն որոշմամբ սահմանված գործարարների, նոտարական վավերացման, ինչպես նաև պայմանագրերից բխող գույքային իրավունքների պետական գրանցման համար ծախսերը ենթակա են իրականացման համայնքային միջոցների հաշվին:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԲԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԱՆ

զի ներկայացրել արորագրելու


ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԵՐԵՄ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ԹՈՎՄԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՈՒԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ




ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԵ



ՄԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ



ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆԻՍԻ 2019 թվականի N 30

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ «ՏԱՊ»-Ի ՀԱՍՏՏՍՄԱՆ ՄԱՍԻՆ

Հինք ընդունելով Հայաստանի Հանրապետության ՏԿԶԼ-ն 2018 թվականի հունվարի 12-ի N 01/16.2/80-18 հանձնարարականը համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Քասախ համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը ՏԱՊ-ը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4

Դեմ -3

Ձեռնպահ -3

ԱՐԲԱՀԱՍՅԱՆ ԵՐԵՍ

ԱՐԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ

ԱՐԲԱՀԱՍՅԱՆ ԱՐՄԱՆ ՅԻ ԿԱՅԱՅԵԿ ԱՐՈՐԱՎԱՐԵԼՅԱՆ

ԹՈՎՍԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՄԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԵ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՍԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝




ԱՐԵՎ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2019 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝



համայնքի ղեկավար Արա Մկրտչյան

Հանրապետության համայնքի ավագանու
2019 թվականի հունիսի 10-ի թիվ 30 որոշմամբ

ՔԱՍԱԽ 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....4
2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2019Թ. ԾՐԱԳԻՐԸ.....26
3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ.....30

Ներածություն

SUՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները և կապիտալները կառավարելու գործիք է, մի փաստաթուղթ, որտեղ հաստատված են ներկայացված են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-ի ռազմավարությունը, ծրագրերը և միջոցառումները՝

Քառասյն համայնքի SUՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգել ՏԻՄ-երի տվյալ տարվա գործառույթները,
- սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (ընթացիտը),
- համայնքի համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շարկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԾ-ի ոլորտային ծրագրի «Տրանսֆորմացիոն հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա SUՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

Քառասյն համայնքի 2019թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

- 1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:
- 2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2019 թվականի ծրագրերի ցանկը և տրանսֆորմացիոն հենքերը (ըստ ոլորտների):
- 3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2019 թվականի ծրագիրը:
- 4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի SUՊ-ի ֆինանսավորման պլանը:
- 5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի SUՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1 «Մեթոդական ուղեցույց համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման», ԳՄՀԸ, ՀՖԱ, 2017

1. Համայնքի տեսչականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսչականը՝

Քաաախ համայնքը բարեկարգ, մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական միջոցների արտադրության, փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև բնակչության գրավածությունն ապահովող համայնք է, որտեղ մատուցվում են բնակչության համար անհրաժեշտ հանրային բոլոր ծառայությունները:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային և արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	48.9	55.0
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարտ)	6422	6600
Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	101792.0	201914.0
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և որանցում աշխատատեղերի թիվը (հատ)	43 /180	50/220

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝	
	Ցուցանիշ	Ելակետային և արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր		
Համայնքի տեղական ինքնակառավարման իրականացումը՝ Քաաախ համայնքում, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային և թափանցիկ համակարգ	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	85
	Տեղական եկամուտների գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը (հարցումների հիման վրա), %	100
	Տեղական եկամուտների գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը (հարցումների հիման վրա), %	48.9
	Տեղական եկամուտների գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը (հարցումների հիման վրա), %	55
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում		
	Տեղական եկամուտների գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը (հարցումների հիման վրա), %	80
	Տեղական եկամուտների գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը (հարցումների հիման վրա), %	100

Նպատակը երկրի պաշտպանությունն ապահովելու բարձրացումը:	Համայնքում բնակվող զինապարտ բաղադրանքների գրանցամատյանի վերջին արժեքը	այո	այո
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և բարդացիկական պաշտպանության կազմակերպում	Նպատակը արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության պաշտպանության և բարդացիկական պաշտպանության կազմակերպմանն ուղղուած ծրագրերի և միջոցառումների իրականացմանը	այո	այո
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:	65	80
	Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:	90	100
	Համայնքում էներգաշինարար կառուցող ընկերության տեսակարար կշիռը ընդհանուր մուտքերի մեջ, %	100	100
	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված ջրամատակարարման ծառայություններից (հարցումների հիման վրա), %	90	100
	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված ջրահեռացման ծառայություններից (հարցումների հիման վրա), %	65	80
	Գազամատակարարված թաղամասերի տեսակարար կշիռը ընդհանուր մեջ, %	75	90
Ոլորտ 5. Հողօգտագործում			
Բարելավել համայնքի գյուղատնտեսական հողերի օգտագործման բարձրացումը	Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման կազմի որոշում և որակական հատկանիշների բարձրացում	30	80
Ոլորտ 6. Տրանսպորտ			

<p>Բարձրացնել համայնքային ենթակառուցվածքի և ինժեներական շահագործման և պահպանման ծախսերի սպասարկման, շահագործման և պահպանման ծախսերի որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</p>	<p>Համայնքային ենթակառուցվածքի և ինժեներական շահագործման և պահպանման ծախսերի սպասարկման, շահագործման և պահպանման ծախսերի որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</p>	<p>70</p>	<p>90</p>
<p>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ Խթանել համայնքում գործարար միջավայրի բարելավումը ու զարգացումը:</p>	<p>Համայնքում ձեռնարկատիրական գործունեության զարգացումը և անհատ ձեռնարկատիրների թիվը</p>	<p>50</p>	<p>65</p>
